ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» հուլիսի 2015 թ. N 456-Ն

ք.Ստեփանակերտ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2015-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԹԹԵՆՈՒ ՏՆԿԻՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներում 2015-2016 թվականներին հողօգտագործողներին թթենու տնկիների տրամադրման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը.

2) Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատասխանատու են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը մինչև 2016 թվականի ապրիլի 30-ը հաշվետվություն են ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն՝ սույն Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների մասին.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը մինչև 2016 թվականի մայիսի 31-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի հուլիսի 14-ի
N 456-Ն որոշման

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ծ Ր Ա Գ Ի Ր
## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2015-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
## ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԹԹԵՆՈՒ ՏՆԿԻՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ – 2015 ԹՎԱԿԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունը, լինելով երկրի պարենային ապահովության և անվտանգության ապահովման գլխավոր ոլորտը, ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Նպատակային քաղաքականության իրականացման ու առկա ներուժի լիարժեք օգտագործման շնորհիվ հնարավոր է որոշակիորեն լուծել գյուղատնտեսության բնագավառում ծագած մի շարք խնդիրներ:

Թթագործությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ավանդական ու եկամտաբեր ճյուղերից է: Թթագործությամբ զբաղվել են հնուց, իսկ թթայգիների մակերեսների ընդլայնումը առավել լայն տարածում էր ստացել 18-րդ դարի սկզբից և հիմնականում օգտագործվել են շերամապահության ու մետաքս արտադրելու համար: Հետագայում արդեն թթենու պտուղները սկսել են օգտագործել սննդի մեջ, թարմ և վերամշակված ձևով՝ պատրաստում էին դոշաբ, չամիչ ու օղի: 20-րդ դարի կեսից սկսած Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության իշխանությունների վարած քաղաքականության, ինչպես նաև դարավերջին պարտադրված պատերազմի հետևանքով թթագործությունը Լեռնային Ղարաբաղում անուշադրության է մատնվել, և թթայգիների տարածքներն էականորեն կրճատվել են, իսկ առկա այգիները հիմնականում անմշակ են, գտնվում են բացթողի վիճակում, որի պատճառով նվազել է նրանց տնտեսական արդյունավետությունը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը հետևողականորեն աջակցում է պտղաբուծության ոլորտում օգտագործվող ռեսուրսների ձեռքբերման գործընթացին, ինչը հնարավորություն է տալիս այգեգործներին արդյունավետ կազմակերպել բազմամյա տնկարկների հիմնադրման և մշակության աշխատանքները: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության թթագործությամբ զբաղվող համայնքներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թթայգիների բարելավման և տարածքների ընդլայնման նպատակով անհրաժեշտ է հողօգտագործողներին առաջնահերթ ապահովել որակյալ տնկիներով:

Հաշվի առնելով թթագործության կարևոր դերը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներում 2015-2016 թվականներին հողօգտագործողներին թթենու տնկիների տրամադրման ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացվում են առկա թթայգիների բարելավման և տարածքների ընդլայնման նպատակով կատարվելիք աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ գործընթացը և ֆինանսավորումը:

## I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում այգետերերին, թթայգիների վերականգնման

նպատակով, թթենու տնկիների ձեռքբերման հարցում աջակցելը, հողերի արդյունավետ օգտագործմանը, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման միջոցով գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացմանը նպաստելն է:

*Խնդիրները.*

1) գյուղատնտեսական տարածքների արդյունավետ օգտագործման համար հնարավորությունների ստեղծում.

2) համայնքներում գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում և բնակչության աշխատունակ հատվածի համար լիարժեք զբաղվածության ապահովում.

3) տնկիների տրամադրման միջոցով թթայգիների մշակության ագրոտեխնիկական պահանջների պահպանման համար նախապայմանների ստեղծում.

4) համախառն արտադրանքի ծավալի ավելացման արդյունքում գյուղատնտեսությունում տնտեսվարողների եկամուտների բարձրացման համար հնարավորությունների ստեղծում:

## II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրով նախատեսվում է հատկացնել 40 000 000 ՀՀ դրամ, որից 8 000 000 ՀՀ դրամը 2015 թվականի պետական բյուջեով «Թթայգիների զարգացման ծրագիր» միջոցառմամբ նախատեսված միջոցներից, մյուս մասը կնախատեսվի 2016 թվականի պետական բյուջեով (Աղյուսակ 1):

***Աղյուսակ 1***

***/ՀՀ դրամ/***

| *Ներդրումների նպատակը* | *Ընդամենը* | *Այդ թվում* | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ***2015 թվականի եռամսյակների*** | | | | ***2016 թվականի եռամսյակների*** | | | |
| | | ***1-ին*** | ***2-րդ*** | ***3-րդ*** | ***4-րդ*** | ***1-ին*** | ***2-րդ*** | ***3-րդ*** | ***4-րդ*** |
| Թթենու տնկիների տրամադրում | 40 000 000 | | | 8 000 000 | | 32 000 000 | | | |

Նշված ֆինանսական միջոցներով «Ասմարյան Գրին Լանդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Սիրիայի Արաբական Հանրապետությունից ձեռք կբերվեն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կներկրվեն մեկից երկու տարեկան բարձրորակ թթենու տնկիներ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն կներկայացվեն տնկիների պահանջարկի մասին համապատասխան հայտեր:

Ներկայացված հայտերի հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից

տնկիները կտրամադրվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերին:

Տնկիներն անհատույց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից կտրամադրվեն հողօգտագործողներին:

## III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սույն ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են`

1) պետական նպատակային աջակցության մեխանիզմների կիրառմամբ հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործում.

2) երկրի ագրոպարենային համակարգի կայուն իրավիճակի ձևավորում ու պահպանում.

3) ագրոպարենային ոլորտում աշխատատեղերի պահպանում և նոր աշխատատեղերի ստեղծում.

4) թթայգիների տարածքների և համախառն բերքի ծավալների ավելացում, գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացում, տնտեսական աճի ապահովում:

Նոր թթայգիների հիմնադրումը նախադրյալներ կստեղծի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում թթագործության ճյուղի զարգացման համար: Արտադրության ծավալների ավելացումը կնպաստի նաև թթի վերամշակման ճյուղի զարգացմանը:

Իրականացվող ներդրումների հաշվին ձեռքբերված և հողօգտագործողներին տրամադրված տնկիները պտղաբերության կանցնեն 4-5-րդ տարում: Հիմնադրված այգիներից ակնկալվող համախառն բերքը տվյալ տարում կազմում է 1 500 - 2 000 տոննա, իսկ լրիվ պտղաբերության հասնելուց հետո` 3 000-4 000 տոննա. 1 տոննայի միջին արժեքը գործող շուկայական գներով կազմում է 120 000 - 130 000 ՀՀ դրամ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ